

## ՄԴ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Հրապարակեց ՀՀ Սահմանադրական Դատարանի որոշումը հայ-թուրքական զոյկ տիրահոջակ արձանագրությունների վերաբերեալ: Եղաւ այն, ինչ պիտի լինէր՝ յայտարարեց, որ *արձանագրություններում ամրագրուած պարտաւորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեանը*: Բիարկէ կարող էր և ցանկալի էր, որ այլ որոշում լինէր: Ես մնում եմ իմ տեսակետին՝ արձանագրությունները հակասում են ՀՀ Սահմանադրութեանը և նրանց նախաստորագրման և ստորագրման գործընթացները խախտել են ՀՀ գործող համապատասխան օրենքն ու կարգը:

Սակայն այսօր ունենք այն, ինչ որ ունենք ու հիմա ծառանում է ամենակարևոր հարցը՝ ի՞նչ պիտի անենք: Մեզ մնում է մի բան՝ խորը շունչ քաշել և շարունակել պայքարը: Առաւել ևս այդ պայքարի համար Սահմանադրական դատարանի խնդրոյ առարկայ որոշումը տւել է նման հնարաւորություններ, քանի որ Սահմանադրական դատարանի իրաւական դիրքորոշումը անվերապահ և բացարձակ չէ, այլ ունի որոշակի յստակ մեկնաբանություններ և վերապահումներ: Բիարկէ, շատ աւելի երկար ժամանակ ու մանրագնի վերլուծութիւն է հարկաւոր ամբողջութեամբ հասկանալու համար առկայ հնարաւորությունները:

Այսուհանդերձ, առաջին իսկ հայացքից ակնյայտ է, որ նման հնարաւորություններ կան:

Օրինակ, իր իրաւական դիրքորոշման մէջ Սահմանադրական դատարանը ամրագրում է, որ արձանագրություններով ստանձնող պարտաւորությունները միայն *փոխադարձ* են և *ունեն բացառապէս երկկողմանի միջպետական բնոյթ*: Յստակօրէն ամրագրուած է, որ Հայաստան-Թուրքիա յարաբերությունները տարանջատուած են Հայաստան-Ադրբեջան

յարաբերություններից կամ Թուրքիա-հայկական սփիւռք յարաբերություններից: Կամ, ինձ

համար ամենակարևորը, *միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետութեան համար իրաւաբանական ուժ կարող են ունենալ միայն ... նկատի ունենալով միջազգային իրաւունքի տեսանկիւնից դրանց վաւերականությունը*: Այսինքն, Սահմանադրական

դատարանն ամրագրում է, որ, օրինակ, եթէ Ալեքսանդրապոլի, Մոսկւայի կամ Կարսի պայմանագրերը միջազգային իրաւունքի տեսանկիւնից անվաւեր են (void), իսկ այդ հարցում կասկած լինել չի կարող, ապա նրանք չեն կարող *Հայաստանի Հանրապետութեան համար իրաւաբանական ուժ ունենալ*, հետևաբար դրանցում նկարագրուած սահմանագծերը չեն

կարող օրինական հիմք հանդիսանալ *գոյություն ունեցող սահմանի համար*: Ըստ այդմ, ՀՀ

Սահմանադրական դատարանի իրաւական դիրքորոշմամբ, արձանագրությունները չեն կարող և չեն օրինականացնում Ալեքսանդրապոլի, Մոսկւայի կամ Կարսի պայմանագրերի, ինչպէս նաև միջազգային իրաւունքի տեսանկիւնից անվաւեր (void) այլ հնարաւոր

անօրինական իրաւական գործիքների (unlawful legal instruments) հետևանքները: Պարզ

ասած, ՀՀ Սահմանադրական դատարանը տիրահոջակ արձանագրությունների վերաբերեալ

տւել է իրաւունքի հիմնարար և համընդհանուր սկզբունքներից մէկի կիրառական

մեկնաբանությունը. *Jus ex injuria non oritur*. (իրաւունքը չի կարող խարսխուած լինել

անօրինականութեան վրայ):

Սահմանադրական դատարանը գտել է նաև, որ արձանագրությունների դրոյթները *չեն կարող մեկնաբանել և կիրառել այնպես, որ հակասեն ՀՀ Սահմանադրության նախաբանի դրոյթներին և Հայաստանի անկախության մասին հռչակագրի 11-րդ կետի պահանջներին*։ Ուզում եմ յիշեցնել, որ ըստ վերոյիշեալ կետի *Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանեան Թուրքիայում և Արևմտեան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին*։

Սահմանադրական դատարանի որոշումը խիստ կարևոր և օրենքով նախատեսված քայլ է Հայաստանի Հանրապետության միջազգային պամանագրերի նկատմամբ վերաբերմունք արտայայտելու ընթացակարգում։ Այսուհանդերձ, այն ներքին ընթացակարգի մաս է կազմում և միջազգային իրաւունքի տեսանկիւնից գրեթէ նշանակութիւն չունի։ Երկրների մեծ մասում Սահմանադրական կամ այլ դատարանները որևէ դերակատարութիւն չունեն միջպետական յարաբերութիւնների մէջ։ Որպէսզի միջազգային իրաւունքի տեսանկիւնից ՀՀ

Սահմանադրական դատարանի արտայայտած դիրքորոշումն իրաւական ուժ ստանայ, ապա այն պետք է պաշտոնական վերապահումների տեսքով ներառւած լինի ՀՀ խորհրդարանի համապատասխան որոշման մէջ։ Ազգային ժողովը պիտի անսակարկ նկատի ունենայ, որ Սահմանադրական դատարանի խնդրոյ առարկայ որոշումը խարսխւած է որոշակի իրաւական դիրքորոշման վրայ, որոշման մէջ առկայ են յստակ վերապահումներ և մեկնաբանութիւններ։ Ուստի, ՀՀ խորհրդարանը միանշանակ պարտաւոր է իր քննարկումներում արտացոլել և, առաւել ևս, իր որոշման մէջ առնւազն ամրագրել Սահմանադրական դատարանի բոլոր վերապահումները և մեկնաբանութիւնները։

Այս ամենով հանդերձ, ես չեմ գտնում, որ հայ-թուրքական արձանագրութիւնները վաւերացնելը բխում է Հայաստանի Հանրապետութեան և հայ ժողովրդի շահերից։ Լաւագոյն ելքն այդ արձանագրութիւններն ընդհանրապէս մերժելն է։ Ինչո՞ւ ենք մեզ համար խնդիրներ ստեղծում, որ յետոյ հերոսաբար յաղթահարենք։ Մի՞ թէ ընկեր Փանջունու ոգին դեռ կենդանի է։ Նա ասում էր. Դուռը գոցեք ես պատուհանէն պիտ մտնեմ։ Եկեք այսօր չփակենք բաց դուռը, որ վաղը ստիպւած չլինենք պատուհանով ներս մտնել։

**Արա Պապեան**

**Մոդուս վիվենդի կենտրոնի ղեկավար**

**12 Յունւարի 2010թ.**